

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

- ✓ 2013թ. հուլիսի 3-4-ը ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Անանյանը և ՀՀ ԱՎԾ գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը այցելել են ք. Բուդապեշտ (Հունգարիա) «Գյուղատնտեսական և գյուղական վիճակագրության կատարելագործման գլոբալ ռազմավարություն» ծրագրի նախագծի քննարկմանը,
- ✓ 2013 թ. հուլիսի 15-19 ՀՀ ԱՎԾ գների և միջազգային համադրումների բաժնի պետ Գ. Մարտիրոսյանը, նույն բաժնի գլխավոր մասնագետ Մ. Երիցյանը և առաջատար մասնագետ Կ. Ավետիսյանը մասնակցել են ք. Թբիլիսիում (Վրաստան) կայացած 2011թ. տվյալներով միջազգային գլոբալ համադրումների ծրագրի շրջանակում միջազգային համադրումների աշխատանքների իրականացման նպատակով աշխատանքային քննարկումներին,
- ✓ 2013 թ. հուլիսի 22-26-ը ՀՀ ՎՊԽ անդամ Յ. Պողոսյանը մասնակցել է ք. Մյունխենում (Գերմանիա) կայացած «Աղտոտվածության համալիր կանխարգելման և մշտադիտարկման ոլորտներում ՀՀ բնապահպանության նախարարության կարողությունները» ծրագրի շրջանակներում ուսումնական այցելությանը,
- ✓ 2013թ. օգոստոսի 5-16-ը ՀՀ ԱՎԾ մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը մասնակցել է ք. Վիեննայում (Ավստրիա) կայացած «Եռամսյակային ազգային հաշիվներ» խորագրով դասընթացին,
- ✓ 2013թ. օգոստոսի 12-16-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Գ. Մարտիրոսյանը, նույն բաժնի գլխավոր մասնագետներ մ. Երիցյանը և Գ. Պետրոսյանը մասնակցել են ք. Ռիգայում (Լատվիա) կայացած «Հարմոնիզացված սպառողական գների ինդեքս» ծրագրի շրջանակներում ուսումնական այցելությանը,
- ✓ 2013թ. օգոստոսի 26-31-ը ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Բուսանում (Կորեայի Հանրապետություն) կայացած Բնակչության գիտական ուսումնասիրությունների միջազգային միության (ԲԳՈՒՄՄ) բնակչության հարցերով 27-րդ միջազգային կոնֆերանսին,